ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 նոյեմբերի 2011 թ. թիվ 11/1673/

29. ՀՀ ԳԱԱ տնօրենների խորհրդի կանոնակարգի մասին

ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշեց.

Հաստատել ՀՀ ԳԱԱ տնօրենների խորհրդի կանոնակարգը /կանոնակարգը կցվում է/:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հաստատված է ՀՀ ԳԱԱ
նախագահության 2011 թ. նոյեմբերի 9-ի
թիվ 11/1673/-29 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի տնօրենների խորհրդի մասին

1. ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների տնօրենների խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/ ստեղծվում է ակադեմիայի նախագահության որոշմամբ ակադեմիական գիտական կազմակերպությունների գործունեությունը համակարգելու նպատակով, հիմնարար հետազոտությունների արդյունավետության բարձրացման, շուկայական պայմաններում ակադեմիայի գիտական կազմակերպությունների աշխատանքային փորձի ընդհանրացման, գիտական կազմակերպությունների վարչա-կառավարչական անձնակազմի որակավորման բարձրացման համար:

Խորհուրդը ակադեմիայի նախագահությանը կից խորհրդակցական մարմին է:

2. Խորհրդի հիմնական խնդիրն է ակադեմիայի նախագահության համար առաջարկությունների և երաշխավորությունների նախապատրաստումը հետևյալ հարցերի շուրջ.

- գիտական կազմակերպությունների ֆինանսա-տնտեսական և կազմակերպչական գործունեության, կառավարման իրավունքով նրանց հանձնված գույքի և ամրագրված հողային տարածքների օգտագործման արդյունավետության բարձրացման հարցերը,
- ակադեմիական գիտության կազմակերպման ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձևերի կատարելագործումը, ակադեմիայի գիտական կազմակերպություններին վերաբերող ակադեմիայի ընդհանուր ժողովների և ակադեմիայի նախագահության որոշումների կատարումը,
- ակադեմիական գիտական կազմակերպությունների և կրթական հիմնարկությունների ինտեգրումը գիտության գերակա ուղղություններով կատարվող հետազոտությունների իրականացման գործընթացում,

- աշխատանքային փորձի փոխանակումը՝ գիտական հետազոտությունների կատարման ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառման, գիտահետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացման, մտավոր սեփականության պաշտպանության, միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ,
- ակադեմիայի գիտական կազմակերպությունների և բարձրագույն դպրոցի հնարավորությունների միավորումը բարձրորակ կադրերի պատրաստման /դոկտորանտուրա, ասպիրանտուրա, մագիստրատուրա/, ինչպես նաև ակադեմիայի համակարգում երիտասարդ գիտնականների ներգրավման հարցում,
- ակադեմիայի գիտական կազմակերպությունների կապերի զարգացումը տնտեսության իրական հատվածի ձեռնարկությունների հետ,
- ակադեմիայի գիտական կազմակերպությունների ուժերի միավորումը միջինստիտուտային արտադրական և նյութական բազայի զարգացման և ամրապնդման ուղղությամբ, եզակի սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոնների ստեղծում,
- առաջարկների և միջոցառումների մշակումը ակադեմիայի գիտական կազմակերպությունների աշխատակիցների և աշխատանքի վետերանների սոցիալական վիճակի, կենցաղային պայմանների և բուժսպասարկման բարելավման ուղղությամ:

3. Խորհրդի նախագահ է նշանակվում ակադեմիայի փոխնախագահը: Խորհրդի նախագահը աշխատանքները կազմակերպում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության և սույն կանոնակարգին համապատասխան: Խորհրդի նիստերը անց են կացվում ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս , քան տարին մեկ անգամ:

4. Խորհրդի գործունեության հետ կապված հարցերի օպերատիվ լուծման նպատակով ստեղծվում է Խորհրդի բյուրո: Բյուրոյի կազմը հաստատվում է ակադեմիայի նախագահության կողմից՝ Խորհրդի նախագահի ներկայացմամբ , 3 տարի ժամկետով: Բյուրոյի նիստերը անց են կացվում ամեն ամիս՝ համաձայն Խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլանի:

Ակադեմիայի բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները, ինչպես նաև ակադեմիայի նախագահության անդամ հանդիսացող ակադեմիայի գիտական կազմակերպությունների տնօրենները կարող են մասնակցել Խորհրդի բյուրոյի նիստերին:

Խորհրդի բյուրոյի նիստերին կարող են հրավիրվել ակադեմիայի արհկոմի ներկայացուցիչները:

5. Խորհրդի անդամները իրավունք ունեն.

- ներկայացնել առաջարկություններ Խորհրդի կամ Խորհրդի բյուրոյի նիստերին քննարկելու համար,
- տեղեկություններ ստանալ Խորհրդի և Խորհրդի բյուրոյի գործունեության, Խորհրդի նիստերի պլանների մասին,
- հարցում անել իրենց կողմից ներկայացված առաջարկությունների քննարկման ընթացքի մասին:

6.Խորհրդի անդամները պարտավոր են.

- գործել համաձայն սույն կանոնակարգի,
- Խորհրդի գործունեության հետ կապված հարցերի լուծման համար տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

7. Խորհրդի գործունեությունը ապահովող կազմակերպական և տեխնիկական գործառույթները իրականացնում է ակադեմիայի գիտակազմակերպական վարչությունը: Գիտակազմակերպական վարչությունը Խորհրդի նիստից մեկ ամիս առաջ տեղեկացնում է Խորհրդի անդամներին առաջիկա նիստի մասին, նախապատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը և նախագծերը, արձանագրում է Խորհրդի և նրա բյուրոյի նիստերը, ձևակերպում է ընդունված որոշումները և այդ մասին տեղեկացնում է ակադեմիայի նախագահության ղեկավարությանը:

8. Խորհրդի նախագահը ակադեմիայի նախագահությանը պարբերաբար զեկուցում է խորհրդի գործունեության մասին: